

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Կոտայքի մարզի Ակունք համայնքի Ջովաշեն, Հատիս, Ակունք,
Կոտայք բնակավայրերի տարածքում նախատեսվող Հիսուս Քրիստոսի
մոնումենտալ արձան-համալիրի կառուցման

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Գազիկ Ծառուկյան» Բարեգործական հիմնադրամ ՀՄԴ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Հապավումներ	3
1.2	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3	Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	<i>7</i>
1.3.3	<i>Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց</i>	<i>12</i>
1.3.4	<i>Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա.....</i>	<i>12</i>
1.3.5	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	<i>12</i>
2.	ՆԱԽՍԵՏՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	15
2.1	ԿԼԻՄԱ.....	16
2.2	ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ	20
2.3	ՀՈՂԵՐ	20
2.4	ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	21
2.5	ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ.....	21
2.8	ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	23
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	24
3. 1	Ռիսկերի գնահատում	25
3.2	Արտանետումների աղբյուրները.....	26
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....	26
3.3.1	Մթնոլորտային օդ.....	26
3.3.2	Ջրային ռեսուրսներ	27
3.3.3	Հողային ռեսուրսներ	27
3.3.5	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները.....	28
3.3.6	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ.....	28
3.3.7	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	30
3.3.8	Աղմուկ	31
3.3.9	մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություններ	35
4.	Շահագործման փուլ.....	36
4.1	Արտանետման աղբյուրներ	36
4.2	Արտահոսքեր	36
4.3	Աղմուկ.....	37
4.3	Հողի էրոզիա.....	37
4.4	Թափոններ.....	37
4.5	Սոցիալ տնտեսական	37
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ.....	42
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ.....	45
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	46
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	26

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝

«Գագիկ Ծառուկյան» Բարեգործական հիմնադրամ ՀՄԴ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝

Երևան, Թումանյան 21

1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝

Կոտայքի մարզ Ակունք համայնք

1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝

Կոտայքի մարզ Ակունք համայնք

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ակունք խոշորացված համայնքի Զովաշեն, Հատիս, Ակունք, Կոտայք բնակավայրերի տարածքում նախատեսվող Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրի կառուցման նախաիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի 8 -րդ ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (Բ կատեգորիա):

Մոնումենտալ արձան-համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

2024 թվականին «Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից մշակվել է տարածաշրջանի «Կոտայք-8» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, ինչը ի թիվս այլ բնակավայրերի, վերաբերում է նաև Ակունքին: «Կոտայք-8» միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը 02.07.24 թ. ստացել է ԲՓ 106-24 դրական փորձաքննական եզրակացությունը:

Միկրոռեզիդենցիալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակում հողատեսքերի նպատակային նշանակությունների փոփոխություններն ու բաշխվածությունը պայմանավորված են և հիմնավորված հիմնադրությամբ փաստաթղթի՝ որպես բնակավայրի հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները կանխորոշող, ելակետային տվյալների համակողմանի վերլուծության արդյունքների վրա հիմնված, առաջիկա 15 տարվա հեռանկարում բնակավայրերի հեռանկարային կարիքները նախատեսող, քաղաքաշինական արդյունավետ միջավայրի ձևավորման անհրաժեշտությամբ, ինչպես նաև 15-ամյա հեռանկարում բնակավայրերի՝ գլխավոր հատակագծով հաշվարկված հեռանկարային աճին համահունչ տարածքների համաչափ զարգացման պահանջներով:

«Կոտայք-8» միկրոռեզիդենցիալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթում նախատեսվել են տարածքի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը նպաստող զարգացման ծրագրեր: Բնապահպանական իրավիճակի բարելավման նպատակով փաստաթղթում ի թիվս այլնի, ներառվել է նաև տուրիզմի զարգացումը, աղբի տեսակավորումը, հոսքաջրերի կենսաբանական մաքրումը, տարածքի կանաչապատումը, որը համահունչ է նախատեսվող գործունեության իրականացմանը, քանի որ նախատեսվել է ներդնել թափոնների կառավարման համակարգ, իրականացնել կանաչապատում, տեղադրել կենսաբանական մաքրման կայաններ և նպաստել տարածաշրջանում տուրիզմի զարգացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ «Կոտայք 8» միկրոռեզիդենցիալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված չի եղել Հատիս լեռան վրա արձանի տեղադրումը, այնուամենայնիվ, նախատեսվող գործունեության իրականացումը համահունչ է տարածքի զարգացման քաղաքականությանը և համապատասխանում է միկրոռեզիդենցիալ համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված միջոցառումներին:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես՝ նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.05.2001 թ.),
2. ՀՀ Զրային օրենսգիրք (04.06.2002 թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք (07.02.2012 թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994 թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ),
8. « Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք (30.05.2001թ),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002 թ. N 138 հրաման «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»,
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010 թ. N 01-Ն հրաման «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»,
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»,
12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,
13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման,
14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 71-Ն որոշում,
18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N 72-Ն որոշում,
19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,
20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ա որոշում,
21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014 թ.-ի N 781-Ն որոշումը:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրը նախատեսվում է տեղադրել Հատիս լեռան բարձունքներից մեկի վրա: Համալիրը իրենից ներկայացնում է 3 հարթակներից բաղկացած հորինվածք, որից սկիզբ է առնում 44.0 մետր բարձրությամբ պատվանդանը և ավարտվում 33.0 մետր բարձրությամբ քանդակով: Համալիրի հիմնական մոտեցումը նախատեսվում է ճոպանուղու վերին կանգառից:

Առաջին հարթակում -5.7 նիշում նախատեսված է սրճարան և այլ ծառայություններ այցելուների համար: Սրճարանին կից նախատեսված են սանհանգույցներ (նաև հաշվանդամների համար):

Երկրորդ հարթակում 0.0 նիշ նախատեսված է ցուցասրահային հատված, ցուցասրահին կից նախատեսված են սանհանգույցներ (նաև հաշվանդամների համար): Բոլոր հարթակները իրար հետ կապված են աստիճաններով և թեքահարթակներով: Վերին հարթակից կազմակերպված է մուտք պատվանդանի ներսի հատված: Վերին հարթակից մեծ թեքությամբ աստիճաններով հնարավոր է բարձրանալ պատվանդանի վերին մակարդակ:

Քանդակը իրականացվում է այլումինե ձուլվածքով և ամրացվում է մետաղական հիմնակմախքի վրա: Պատվանդանի ծավալում նախատեսված են մոտեցումներ մետաղական հիմնակմախքին հետագա շահագործման կարիքների համար:

Կառույցը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնից տրավերտինե սալերից երեսպատումով: Համալիրում նախատեսված են դեկորատիվ հարթաքանդակներ:

Ճոպանուղու ներքևի հարթակը նախատեսվում է Ակունք համայնքի Կոտայք բնակավայրում: Ճոպանուղու երկայնքով տեղադրվելու են թվով 22 կանգնակներ: Ճոպանուղու երկարությունը կազմելու է 3750 մ:

Ճապանուղու ներքևի հարթակից վերև ավտոմոբիլային ճանապարհ չի նախատեսվում, համալիրի սպասարկման համար կօգտագործվի գոյություն ունեցող գրունտային ճանապարհը, որը բարեկարգելու նպատակով կխճապատվի:

Համալիրի ջրամատակարարման հաշվային ելքերը որոշելու համար ելակետային տվյալներ են հանդիսացել սպառողների թիվը և սանիտարական սարքերի քանակը: Անհրաժեշտ ջրի քանակները՝ ներառյալ տաք ջուրը, կազմում են. $Q_{\text{max}}/\text{վրկ}=3,3$ $\text{վ}/\text{վրկ}$ $Q_{\text{max}}/\text{ժամ}=5,8$ $\text{խմ}/\text{ժ}$, $Q_{\text{օր}}=4,5$ $\text{խմ}/\text{օր}$:

Համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014 ներքին հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակը կազմում է 5 $\text{վ}/\text{վրկ}$ (2 շիթ՝ յուրաքանչյուրը 2,5 $\text{վ}/\text{վրկ}$):

Համաձայն ՀՀՇՆ 40-01.02-2020-ի՝ արձան-համալիրի արտաքին հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը կազմում է 25 $\text{վ}/\text{վրկ}$: Արտաքին հրդեհամարման համար նախատեսված է հակահրդեհային հիդրանտի հոր՝ ստորգետնյա բարձր տեղադրման հիդրանտով:

- 5.70 և 0.00 նիշերում նախատեսված են էլ.վահանային սենյակներ:

Յուրաքանչյուրում նախատեսված է տեղադրել պահեստի ավտոմատ միացման սարք և բաշխիչ վահան:

Նախագծի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը:

Հողամասը, որի մակերեսը կազմում է 2.1701 հա, 0.1315 հա, 0.5 հա, գտնվում է Կոտայքի մարզ, համայնք Ակունք գյուղ Ակունք 110 հասցեում: Նախատեսվում է կառուցել ճոպանուղի դեպի Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան:

Ճոպանուղին ամբողջ երկարությամբ հենված է մետաղական աշտարակների վրա, որոնց համար էլ որպես հիմնատակ ծառայում են երկաթբետոնե կետային հիմքերը: Յուրաքանչյուր կետային հիմքի համար նախատեսվում է մոտ 37.0 խմ ծավալով բետոնե հիմքեր: Մետաղական աշտարակները ունեն բրգաձև տեսք և առավելագույնը մինչև 24 մ բարձրություն:

Ճոպանուղին ունի 2 կայան: Առաջին կայանը տեղակայված է Կոտայքի մարզի, Կոտայք գյուղում: Երկրորդ կայանը նախատեսվում է Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձանի մոտակայքում: Ճոպանուղին կարող է տեղափոխել մինչև 12 մարդ:

Այն ապահովում է մարդկանց հոսքը Կոտայք գյուղից դեպի Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան և հակառակ ուղղությամբ:

Կառուցվող ճոպանուղին բացի փոխադրամիջոց հանդիսանալուց նաև ամբողջ ճանապարհի բարձրադիր դիրքերը ապահովում է գեղեցիկ տեսարան:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Ներկայում տարածքում կազմակերպված է շինարարական հրապարակ, հողային աշխատանքներն իրականացված են ամբողջ ծավալով:

«Հատիս հրաբուխ» բնության հուշարձանի բնապահպանական, երկրագիտական և զբոսաշրջային արժեք ներկայացնող առանձնացված 9 երկրատեղանքների (ընդհանուր՝ 148,75 հա մակերեսով) հիման վրա հաստատվել է Կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի սահմանները և ընդհանուր տարածքի չափը հաստատելու, Ակունք համայնքի Ակունք, Զովաշեն, Հատիս և Կոտայք բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը որպես նվիրաբերություն ընդունելու, նպատակային և գործառնական նշանակությունը փոխելու մասին» № 715-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում): Համաձայն Որոշման՝ ի թիվս այլնի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Ակունք, Զովաշեն, Հատիս և Կոտայք բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի գիտական և զբոսաշրջային տեսանկյունից արժեքավոր երկրատեղանքների պահպանության և օգտագործման ռեժիմի սահմանման նպատակով շրջակա միջավայրի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի N 372-Ն հրամանով հաստատվել է «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի անձնագիրը: «Հատիս հրաբուխ» բնության երկրաբանական հուշարձանի անձնագրի համաձայն՝ սահմանվել են Հատիս լեռան վրա գտնվող 9 երկրատեղանքների սահմանները և հատակագծերը: Նշված 9 երկրատեղանքները հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա են պահպանության բնության հուշարձանի պահպանության ռեժիմին համապատասխան:

Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձան-համալիրը նշված երկրատեղանքների սահմանագծից գտնվում է մոտ 125 մ հեռավորության վրա, իսկ ճոպանուղու ամենամոտ գտնվող կանգնակը՝ մոտ 5 մետր հեռավորության վրա: Երկրատեղանքների վրա ազդեցություններից խուսափելու նպատակով իրականացվելու են կանխարգելիչ միջոցառումներ՝ բնության հուշարձանի երկրատեղանքի սահմանին կից տարածքներում տեղադրվելու են հատուկ նշաններ և ցուցանակներ, որոնց միջոցով աշխատակիցները և զբոսաշրջիկները կտեղեկացվեն, բնության հուշարձանի երկրատեղանքի վերաբերյալ: Երկրատեղանքների շրջակայքում աշխատանքները կիրականացվեն ժամանակակից տեխնիկական միջոցներով՝ բացառելով բացասական ազդեցությունը պահպանվող տարածքների վրա: Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավորինս ծանր տեխնիկա չի կիրառվի:

Տարածքում մարդկանց կուտակումներից խուսափելու նպատակով կազմվելու է զբոսաշրջային հոսքի կառավարման պլան և ժամանակացույց: Այդ նպատակով կդիտարկվի էլեկտրոնային տոմսերի և նախնական ամրագրման համակարգ ներդնելու հնարավորությունը, որպեսզի հնարավոր լինի խուսափել մեծ կուտակումներից և խրախուսել շրջակա միջավայրի համար անվտանգ էկոտուրիզմի զարգացումը՝ ապահովելով անվտանգ երթևեկություն, կանոնակարգված տեղաշարժ և տարածքի բուսականության պահպանում:

Մոտակա բնակավայրերը գտնվում են 1.44 կմ և ավելի հեռավորության վրա:

Նախատեսվող կառուցապատման տարածքից 1 կմ և ավելի հեռավորությամբ տարածքներում ջրային ռեսուրսներ առկա չեն:

Բնության հուշարձանի 4-րդ երկրատեղանքն իրենից ներկայացնում է սեզոնային ջրվեժ՝ օբիսդիանների կարնիզներում, որը հոսում է միայն տարվա որոշակի ժամանակահատվածում՝ եղանակային որոշակի պայմանների, ձնհալքով կամ տեղումներով պայմանավորված: Տեղումների կամ ձնհալքի ժամանակ այս ջրվեժը կենդանանում է՝ ստեղծելով դինամիկ բնական տեսարան: Հրաբխի սեզոնային ջրվեժը գտնվում է Հրաբխի հարավարևմտյան լանջին: Այն սկիզբ է առնում Հրաբխի արևմտյան գագաթային հատվածից՝ տեղումների և ձնհալի հալոցքներից, որոնք իրենց ճանապարհին մերկացնում են ռիոլիտ-տրախիդացիտային լավաները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցման համար նախատեսվող ճուպանուղու կանգնակները տեղադրվելու են սեզոնային ջրվեժի ջրվահավաք ավազանին գրեթե զուգահեռ՝ համապատասխան տեխնիկայի կիրառման, հորատման և հողային այլ աշխատանքների իրականացման ժամանակ կնախատեսվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ սեզոնային ջրվեժի ջրհավաք ավազանի ջրահոսքերի վրա հնարավոր ազդեցությունները և ջրի հոսքին խոչընդոտող հնարավոր բոլոր հանգամանքները կանխելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում, ջրային հոսքերին չխոչընդոտելու նպատակով, կտեղադրվեն խողովակներ, որոնց միջոցով ջրային հոսքերը կհասնեն դեպի սեզոնային ջրվեժի տարածք:

Նախատեսվող գործունեության փակման փուլ չի նախատեսվել, քանի որ հուշարձանի ապամոնտաժում և տարածքից հեռացում չի նախատեսվում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Գագիկ Ծառուկյան» Բարեգործական հիմնադրամ ՀՄԴ-ի միջև կնքվել է հուշագիր Կոտայքի մարզի Հատիս Լեռան վրա նոր հայտնաբերված ամրոցի հետագա հնագիտական ուսումնասիրության, ամրակայման և վերականգնման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Համաձայն «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի և ԿԳՄՍ նախարարության միջև կնքված հուշագրի՝ սեփական միջոցների հաշվին հիմնադրամն իրականացրել է նոր հայտնաբերված ամրոցի հնագիտական պեղումները, ամրակայման և վերականգնման աշխատանքները: ՀՀ ԳԱԱ-ի «Հնագիտություն և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է պատմամշակութային

հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունների և պեղումների կատարման պայմանագիր (արժեքը կազմել է 32.499.834 դրամ):

Հիմնադրամը նաև իր իրավասությունների սահմանում կցուցաբերի աջակցություն՝ նոր հայտնաբերված ամրոցի պահպանության հարցում:

Ճոպանուղու հենասյունները գտնվում են հիմնադրամին պատկանող հողամասում, առկա է հողային աշխատանքների թույլտվություն:

Նախագծային լուծումներում հաշվի է առնված տեղանքի սեյսմիկ ռիսկը, որի վերաբերյալ առկա է նաև փորձագիտական եզրակացություն և հետազայում նախագիծը ենթարկվելու է տեխնիկական անվտանգության փորձաքննության:

ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ՝

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը

- Ակունք գյուղ - 60000 քմ;
- Զովաշեն գյուղ - 197000 քմ;
- Հատիս գյուղ - 275000 քմ:
- Կոտայք գյուղ - 28016 քմ(ճոպանուղի):

Կառուցապատման մակերեսը

- Ակունք գյուղ - 4056 քմ:
- Զովաշեն գյուղ - 887 քմ:
- Հատիս գյուղ - 2153 քմ:
- Կոտայք գյուղ - 5000 քմ:

Բնական ռելիեֆ

- Ակունք գյուղ - 24000 քմ;
- Զովաշեն գյուղ - 78800 քմ;
- Հատիս գյուղ - 110000 քմ:
- Կոտայք գյուղ - 11200 քմ

Անջրանցիկ մակերեսներ

- Ակունք գյուղ - 31944 քմ;
- Զովաշեն գյուղ - 117313 քմ;
- Հատիս գյուղ - 162847 քմ:
- Կոտայք գյուղ - 11816 քմ

Կանաչապատում՝ 4950 քմ;

Կանաչապատումը նախատեսվում է մոնումենտալ արձանի շրջակայքում, կանաչապատման գլխավոր հատակագիծը ներկայացվում է հավելվածներ բաժնում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանք, կտնկվեն ծառեր և թփեր, տարածքի կանաչապատումը կիրականացվի տեղանքին բնորոշ և ծովի մակարդակից տվյալ բարձրության վրա աճող բուսատեսակներով:

Կանաչապատումն կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018 թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

1.3.3 Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև և հիման վրա՝ հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.3.4 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը կկազմի 70 մարդ, որից՝ ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 8 մարդ:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

1.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ $420 \text{ խմ} \times 70 \text{ մ} \times 36 / 1000 = 17.6 \text{ տ}$: Շինարարական աղբն ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր՝ հատուկ սահմանված երթուղով:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{ju.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 8 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 խմ.օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 62 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$W_{\text{խ.տ.}} = (8 \times 0.016 + 62 \times 0.025) \times 1080 = 1812$ խմ/շին. ժամ:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

$S1$ –ջրվող տարածքի մակերեսը, 5000 քմ (միաժամանակ շին. ամենամեծ մակերես),

$K1$ – 1 մ2 օրական ջրցանի նորմը՝ 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 720,

D – ջրցանի քանակը օրվա ընթացքում՝ 2-3 անգամ,

$U1 = 5000 \times 0.0015 \times 720 \times 2 = 10800$ խմ.շին.ժամ.

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 12612 խմ/շին. ժամ:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը կիրականացվի նախագծին համապատասխան (նախագիծը կցվում է):

Համալիրի ջրամատակարարման հաշվային ելքերը որոշելու համար ելակետային տվյալներ են հանդիսացել՝ սպառողների թիվը և սանիտարական սարքերի քանակը: Անհրաժեշտ ջրի քանակները՝ ներառյալ տաք ջուրը, կազմում են. $Q_{\text{max}}/\text{վրկ}=3,3$ վ/վրկ $Q_{\text{max}}/\text{ժամ}=5,8$ խմ/ժ, $Q_{\text{օր}}=4.5$ խմ/օր:

Տարածքում նախատեսվում է տեղադրել 2 հատ 5 խմ/օր հզորությամբ կենսաբանական մաքրման կայան, որոնք հոսքաջրերը կմաքրեն մինչև ոռոգման ջրի ցուցանիշներ: Մաքրված ջուրը կօգտագործվի ոռոգման նպատակով:

Համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014 ներքին հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակը կազմում է 5 վ/վրկ (2 շիթ՝ յուրաքանչյուրը՝ 2,5 վ/վրկ):

Համաձայն ՀՀՇՆ 40-01.02-2020-ի՝ արձան-համալիրի արտաքին հրդեհամարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը կազմում է 25 վ/վրկ: Արտաքին հրդեհամարման համար նախատեսված է հակահրդեհային հիդրանտի հոր՝ ստորգետնյա բարձր տեղադրման հիդրանտով:

Ջրցանը կիրականացվի ջրցան մեքենաների միջոցով, օրական երկու-երեք անգամ՝ անհրաժեշտությունից ելնելով (չոր և շոգ եղանակին՝ 3 անգամ):

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուր ապահովելու նպատակով համապատասխան փաստաթղթերի փաթեթը կներկայացվի լիազոր մարմին՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:


Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Տարածքի էլեկտրամատակարարումը իրականացնելու նպատակով կկառուցվի 6300 կՎԱ հզորության 35/10 կՎ ենթակայան՝ համաձայն նախագծի:

Աղյուսակ 1		Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ	
NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկռունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	Liebherr 132 EC - H8	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	1
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	1
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	2
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրագլղոն	НАМИ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՐ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը տեղադրված է Հատիս լեռան գագաթին: Այն Չորրորդական հասակի հրաբուխ է և ունի 2528,6 մ բացարձակ բարձրություն: Նախատեսվող հուշահամալիրի տարածքում կազմակերպված է շինարարական հրապարակ, հողային աշխատանքներն իրականացված են ամբողջ ծավալով: Տարածքում իրականացվել են ինժեներատեխնիկական աշխատանքներ: Գրունտները ուսումնասիրելու նպատակով իրականացվել են հորատանցքեր, առկա է «Նորգեո» ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացություն տարածքի ինժեներատեխնիկական պայմանների և սեյսմիկ միկրոշրջանացման վերաբերյալ: Նշված աշխատանքները և տարածքում պեղումներ կատարելու նպատակով՝ գոյություն ունեցող ճանապարհները հարթեցվել են:

Երկրաձևաբանական տեսակետից «Հատիս» հրաբուխը տեղադրված է Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարավանդում, այն երկնոդալ գմբեթաձև հրաբուխ է, օվալաձև հիմքով, որի բացարձակ բարձրությունը 2528,6 մ է, հարաբերական բարձրությունը Ակունք գյուղից՝ 1000 մ, իսկ հիմքի տրամագիծը հյուսիս-հարավ ուղղությամբ հասնում է մինչև 7,5 կմ: Հրաբխագիտական տեսանկյունից այն մեծ հետաքրքրություն է առաջացնում, քանի որ հանդիսանում է ռիոլիտային կազմի հրաբուխ՝ լավ արտահայտված օբսիդիաններով, ռիոլիտներով, պեոլիտներով և պիրոկլաստիկ առաջացումներով:



Համաձայն կատարված աշխատանքների տվյալների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը՝ վերևից-ներքև (ГОСТ 25100-2011):

Շերտ թիվ 1. Կարմրավուն խարամ, ավազա-մանրախճային կազմի:

Շերտ թիվ 2. Մոխրագույն խարամ, խճային կազմի:

Շերտ թիվ 3. Հրաբխային խարամացված ապար մոխրագույն, ծակոտկեն, խոռոչավոր:

Եզրակացություններ

Կատարված ինժեներա-երկրաբանական աշխատանքների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների.

1. Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը տեղադրված է Հատիս լեռան գագաթին:

2. Տեղամասի հիդրոթերևոթաբանական տվյալները բացակայում են:

3. Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներա-երկրաբանական հետևյալ տիպերը (ГОСТ 25100-2011):

❖ Խճային շերտ թիվ 1,2

❖ Կիսաժայռային շերտ թիվ 3:

4. Հիմքի գրունտների անհամասեռության դեպքում Շերտ թիվ 1-ի և 2-ի հրաբխային խարամ (ավազա-խճային և խճային կազմի) և շերտ թիվ 3 կիսաժայռային գրունտների պարագայում անհրաժեշտ է շերտ թիվ 1-ի և 2-ի գրունտները հեռացնել և փոխարինել բուտաբետոնով:

5. Շերտ թիվ 1 և 2 հրաբխային խարամ գրունտները որպես հիմնատակի գրունտներ ընդունելու պարագայում իրականացնել ջրամեկուսացում և բացառել հիմնատակեր ջրի ներթափանցումը:

6. Շերտ թիվ 3-ի, որպես հիմնատակի գրունտ ընտրելու պարագայում կառույցը նախագծել հենասյուների վրա:

7. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական երևույթները և պրոցեսները (սողանք, կարստ, և այլն) տեղամասում բացակայում են:

8. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը տեղմասում մինչև 25,0 մ խորությամբ հորատանցքում չեն բացահայտվել և համաձայն գրականության տվյալների՝ դրանք ունեն համեմատաբար ավելի խորը տեղադրում:

2.1 ԿԼԻՄԱ

Ընդհանուր առմամբ Ակունք համայնքի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան – 32,6 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +38,7 °C:

Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը կազմում է 61 %:

Տարեկան տեղումների քանակը 475 մմ:

Ստորև աղյուսակում տվյալները ներկայացված են «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	-4,9	-2,8	-2,7	9,4	14,4	18,9	22,8	22,8	18,6	11,8	4,8	-1,7	9,7	-32,6	38,7

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերևութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	35	36	44	60	64	39	26	13	17	40	35	36	445	186	259
	30	31	42	40	42	29	53	45	35	39	37	28	53		

Աղյուսակ 3.4. Քանու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրրի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	ՀսԱրլ	5,7	ՀսԱրլ	1,8
		1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7						
	Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6				
		3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1						
	Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8				
		4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8						
	Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9				
		2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2						

2.2 ՕՂԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Ակունք համայնքի օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Ակունք համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հաշվետվությունում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները, վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>) ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Ակունք համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 9284 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից՝ Ակունք համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում.

Փոշու մասնիկներ՝ 0,071 մգ/խմ,
ածխածնի մոնօքսիդ՝ 0.8 մգ/խմ,
ազոտի երկօքսիդ՝ 0,023 մգ/խմ,
ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/խմ:

2.3 ՀՈՂԵՐ

Ակունք գյուղ

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Զովաշեն գյուղ

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Հատիս գյուղ

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,

- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Կոտայք գյուղ

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արոտավայր,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Տարածաշրջանում հանդիպում են հողաձածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.4 Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսկավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/, ծածկագիրը՝ 9120040001004/՝ 17,6 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 420 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի համաձայն՝ հատուկ սահմանված երթուղով ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված հատուկ վայր:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 12600 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Շահագործման փուլում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով աղբահավաք ծառայության կողմից կհեռացվի համայնքային աղբավայր:

Գործունեության ընթացքում «Թափոնների մասին» օրենքի պահանջով կիրականացվի գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

2.5 Կենսաբազմազանություն

Ակունք համայնքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Ակունք համայնքը գտնվում է Ապարանի բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

2.6 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների՝ այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆալավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից-OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (գիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշիր պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից-EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթոփ երկսեռ), Festuca sulcata (շյուղախոտ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքունկ), Achillea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն: Բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ Ձազախոտ էգինյան (լատին.՝ *Erysimum eginense*):

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

2.7 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ), *Canis lupus* (գայլ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կոունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Տարածքում հանդիպում են Գաճաճ արծիվ (լատին. *Hieraetus pennatus*) և Հայկական իժ (լատին. *Vipera raddei*) կենդանատեսակները, որոնք ունեն պահպանության կարիք:

Կատարված նախնական ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվող գործունեության անմիջական տարածքում կարմիրգրքյան կենդանիներ և բույսեր չեն դիտարկվել:

2.8 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:

Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակն է: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքս գետը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում

անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետերը, Գետառը:

Սնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև Աղյուսակ 2.7-ում:

Աղյուսակ 2.7. Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները

Գետը	Ծախսը, մ3/վ	Տարեկան հոսքը, մլն.մ3	Հոսքի մոդուլը, լ/վ կմ2	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57

Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի մոնիթորինգը իրականացվում է ՀՄԿ ՊՈԱԿ -ի կողմից: Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2023 թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր և անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս անհրաժեշտ է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրոյթներով,

շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին անհրաժեշտ է դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Շրջակա համայնքների բնակիչների վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում, քանի որ ամենամոտ բնակավայրը Զովաշենն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 1,44 կմ հեռավորության վրա:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատող անձնակազմը կիրահանգավորվի բնության հուշարձանի հարակից տարածքում աշխատանքներ իրականացնելու կանոնների վերաբերյալ, կտեղադրվեն ծանուցողական ցուցանակներ և նշաններ:

Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը կկատարվեն նախապատրաստական աշխատանքներ, տեղանքում կկատարվի մանրազնին զննություն, կգնահատվեն բոլոր հնարավոր ռիսկերը և աշխատանքները կկազմակերպվեն այնպես, որպեսզի շինարարության ընթացքում որևէ ազդեցություն չլինի ջրվեժի վրա և որևէ կերպ հոսքերը չխոչընդոտվեն: Սեզոնային ջրվեժը կարող է լինել հայտնի զբոսաշրջային վայր, որն այցելուների համար կարող է նաև գրավիչ լինել հոսքի ջրառատ ժամանակաշրջանում (հենասյունները տեղադրվելու են բացառապես հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող տարածքում և ջրային հոսքերը պահպանվելու են):

Լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո տարածքում կտեղադրվեն նաև ծանուցողական բնույթի ցուցանակներ:

Սույն հաշվետվությունում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումների հիմքերի փորման ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ՝ (ածխածնի օքսիդ CO, ազոտի օքսիդներ Nox, ածխաջրածիններ (CmHn)):

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) ի հայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվելու են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,

- միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակության կրճատում,

- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարաններ: Անձրևաջրերի նստեցման պարզարանները գտնվում են շինարարական հրապարակին կից (ցածրադիր հատվածներում), իրենից ներկայացնում են պլաստմասե 25 խմ ծավալով տարողություն ընդհանուր առմամբ 10 հատ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 5000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

- շահագործման փուլում կենցաղային հոսքաջրերը կենթարկվեն կենսաբանական մաքրման, որից հետո կօգտագործվեն ոռոգման նպատակով:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատ մակերեսը կազմում է 4950 քմ:

Համաձայն նախնական էսքիզի՝ տարածքում նախատեսվում է տնկել Կիպրոս - 12650 հատ (6200 գծմ), Թզուկ վարդեր - 2380 հատ, Սիզամարգ - 4950 քմ (վերջնական տեսակային կազմը և քանակները կհստակեցվեն կանաչապատման նախագիծը համայնքի հետ համաձայնեցնելուց հետո):

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է համայնքի ոռոգման ցանցից՝ համապատասխան թույլտվություն ստանալուց հետո: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից 3 տարի հետո, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո:

Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:

3.3.5 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է:

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնեցվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:

Կարմիր գրքում գրանցված բույսերի հայտնաբերման դեպքում նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջներով:

Շինարարական աշխատանքերը կկազմակերպվեն այնպես, որ հնարավորինս քիչ վնաս հասցվի լանդշաֆտին: Շինարարական աշխատանքների ավարտից հետո դրանց հետևանքով վնասված լանդշաֆտի հատվածները կվերականգնվեն:

3.3.6 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Հիմնական ազդեցությունը պայմանավորված է հողային և շինարարական աշխատանքներով (հողային աշխատանքներն իրականացված են):

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով, հաշվի առնելով, որ տարածքում հնարավոր է նաև հանդիպի Գաճաճ արծիվ (լատին. *Hieraaetus pennatus*) կարմիրգրքյան տեսակը ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլից մինչև մայիսի վերջին տասնօրյակը) դուրս:

Համապատասխան մասնագետների կողմից կուսումնասիրվեն նաև թռչունների միգրացիոն ուղիները և կձեռնարկվեն միջոցներ դրանց չխոչընդոտելու համար:

Ընդհանուր առմամբ շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, կձեռնարկվեն անհրաժեշտ բոլոր միջոցառումները, ինչի շնորհիվ կենդանական աշխարհին վնաս չի հասցվի կամ այն կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

Կենսաբազմազանության պահպանության նպատակով նախատեսվում է շինարարության և շահագործման փուլերում իրականացնել մշտադիտարկումներ: Կենդանական աշխարհի, հատկապես թռչունների (այդ թվում՝ միգրացվող) պահպանության նպատակով՝ ճոպանուղու կանգնակների, խցիկների, ճոպանների, ինչպես նաև արձանի վրա տեղադրվելու են լուսանդրադարձնող և տեսանելի մարկերներ, էներգաարդյունավետ «LED» լուսարձակներ և այնպես, որ չխաթարվի կենդանիների բնականոն կենսակերպը:

3.3.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- հրդեհի առաջացումը,
- հեղուկ նյութերի արտահոսքը,
- աշխատողների վնասվածքները,
- շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

Շինարարական աշխատանքների ժամանակ՝

- մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

– նախատեսվող մոնումենտալ արձան-համալիրի վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների,

– իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.8 Աղմուկ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական

միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,
- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,
- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության ընթացքում աշխատանքների իրականացնելիս շինարարական տեխնիկայի աշխատանքը: Հաշվարկը առված է ենթադրելով, որ բոլոր շին.տեխնիկան շահագործվում է միաժամանակ՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{k B} \right)$$

Ելակետային տվյալներ

Շինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկոունկ Галичанин КС-65715-10՝ 102 դԲ:

Հողային աշխատանքների փուլ

- Բուդոզեր KOMATSU D37-EX-22՝ 97 դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W՝ 99 դԲ:

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ СБ-69Б՝ 96 դԲ:
- Վերամբարձ կոունկ KB403՝ 100 դԲ (առկա կոունկների հետ համեմատելի):
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-695՝ 98 դԲ:
- Բեռնատար ինքնաթափ МА3 5550՝ 95 դԲ:
- Շարժական կոմպրեսոր ЗФ-55 В՝ 92 դԲ:
- Էլեռակցման սարք СТН 500՝ 90 դԲ:

Հեռավորություն (r)՝ 50 մետր:

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ծայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Բուդոզեր KOMATSU D37-EX-22՝ $97+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էքսկավատոր Hyundai 170W՝ $99+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Վերամբարձ ավտոկոունկ Галичанин КС-65715-10՝ $102+10 \cdot \log_{10}(0.02006366) = 85.02$ դԲ:
- Ավտոբետոնախառնիչ СБ-69Б՝ $96+10 \cdot \log_{10}(0.02006366) = 79.02$ դԲ:
- Վերամբարձ կոունկ KB403՝ $100+10 \cdot \log_{10}(0.02006366) = 83.02$ դԲ:
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-695՝ $98+10 \cdot \log_{10}(0.02006366) = 81.02$ դԲ:
- Բեռնատար ինքնաթափ МА3 5550՝ $95+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Շարժական կոմպրեսոր ЗФ-55 В՝ $92+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:
- Էլեռակցման սարք СТН 500՝ $90+10 \cdot \log_{10}(0.02006366) = 78.02$ դԲ:

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$LA_{էկվ} = 10 * \log_{10}(10^{\{78.02/10\}} + 10^{\{78.02/10\}} + 10^{\{85.02/10\}} + 10^{\{79.02/10\}} + 10^{\{83.02/10\}} + 10^{\{81.02/10\}} + 10^{\{3*78.02/10\}}) = 10 * \log_{10}(1.047 \cdot 10^9) = 90.18 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 90.18 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ³: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 * \lg * m \text{ է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{աղ} = 13 * \lg * m \text{ է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m \text{ է} = K * m$ - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$$m \text{ է} = 7850 * 1 = 7850$$

$$L_{աղ} = 23 * \lg * m \text{ է} - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 90.18 - 79.56 = 10.62 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 10.62 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Շահագործման փուլում աղմուկի աղբյուր կարող է հանդիսանալ ճոպանուղին: Ճոպանուղին եվրոպական արտադրության սարքավորում է, որի անձնագրային տվյալով աղմուկը թույլատրելի նորմերի սահմաններում է:

Թրթում

Թրթման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները X0 Y0 և Z0 առանցքներով			
	Թրթման արագացում		Թրթման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
<p>Ոչ մշտական թրթման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p>				

Շինարարության ընթացքում թրթման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

3.3.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություններ

Շինարարության փուլում շրջակա համայնքների բնակիչների վրա որևէ բացասական ազդեցություն չի ակնկալվում, քանի որ բնակավայրերը գտնվում են

բավականին հեռավորությունների վրա, որպեսզի դրանց վրա ազդեցություն չլինի (ամենամոտը Ձովաշեն՝ 1,44 կմ):

Աշխատողների վրա շինարարության փուլում ազդեցությունները և վնասվածքներ ստանալու ռիսկերը բացառելու նպատակով կիրականացվի համապատասխան հրահանգավորում և կձեռնարկվեն անվտանգության միջոցառումներ:

Կոտայք բնակավայրում կապված մարդկային հոսքի, մեքենաների շարժի ավելացման հետ ճանապարհային ուտիկանության հրահանգներով կնախատեսվեն համապատասխան միջոցառումներ:

4. Շահագործման փուլ

4.1 Արտանետման աղբյուրներ

Շահագործման փուլում արտանետման աղբյուրներ չկան: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մեքենաների հոսք դեպի արձան-համալիրի տարածք չի նախատեսվում, բացի այդ շահագործման փուլում չկան այնպիսի տեխնոլոգիաներ, որոնցից առաջանան արտանետումներ: Արձան-համալիրի տարածքում նախատեսվում է սրճարան, որի աշխատանքը ապահովվելու է էլեկտրականությամբ: Հետևաբար, որևէ արտանետում չի կանխատեսվում, որը կլինի սահմանված նորմերից բարձր և կվնասի շրջակա միջավայրը:

4.2 Արտահոսքեր

Շահագործման փուլում առաջացող կենցաղային հոսքաջրերը կենթարկվեն մաքրման կենսաբանական մաքրման կայաններում, որից հետո մաքրված ջրերը կօգտագործվեն ոռոգման նպատակով: Կենսաբանական մաքրման կայանները կեղտաջրերը մաքրելու են մինչև այնպիսի ցուցանիշներ, որով հնարավոր լինի իրականացնել կանաչապատ տարածքի ոռոգումը: Մաքրված կեղտաջրերով ոռոգումն իրականացնելը կնվազեցնի նաև ոռոգման նպատակով ջրառի քանակները, ինչն էլ կնպաստի ջրային ռեսուրսների ավելի խելամիտ օգտագործմանը և պահպանությանը:

Կենսաբանական մաքրման կայանից ակտիվ տիղմի հեռացման համար այն ջրազրկվելու է ֆիլտր մամլիչների միջոցով, որի հետևանքով տիղմը վերածվելու է պինդ զանգվածի և տեղափոխվելու է պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված ընկերության կողմից: Վնասագերծված ակտիվ տիղմը հնարավոր է օգտագործել նաև որպես օրգանական պարարտանյութ՝ կոմպոստավորումից հետո:

4.3 Աղմուկ

Տեղադրվող ճոպանուղին եվրոպական արտադրության տեխնիկական միջոց է, որի տեխնիկական անձնագրում ներկայացված աղմուկի ցուցանիշի համաձայն՝ գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում: Բացի այդ այն գտնվում է բնակավայրերից բավականին հեռավորության վրա: Արձան-համալիրի տարածքում աղմուկի այլ աղբյուրներ չկան:

4.3 Հողի էրոզիա

Հողային ռեսուրսների պահպանության և հողի էրոզիան կանխելու նպատակով նախատեսվում է հողային աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի վերականգնում: Այդ նպատակով հնարավոր է օգտագործել խիտ արմատային համակարգ ունեցող բուսատեսակներ, հատկապես լանջերի վրա, որպեսզի կանխվի հողի էրոզիան: Բուսատեսակների ընտրությունը կկատարվի համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի 108-Ն որոշման և հաշվի առնելով համապատասխան մասնագետների կարծիքը: Քանի որ տեղանքն ունի թեք լանջեր, անհրաժեշտության դեպքում կտեղադրվեն արհեստական արգելակիչներ (գեոտեքստիլ, ծառաշերտեր, քարային պատեր)՝ հողաշերտի տեղաշարժը կանխելու համար:

4.4 Թափոններ

Շահագործման փուլում կառաջանա կենցաղային աղբ: Համալիրի տարածքում և ճոպանուղու կայանների մոտակայքում նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ, տարածքում բացառվելու է աղբի կուտակումը, այն ամենօրյա ռեժիմով պայմանագրային հիմունքներով կհեռացվի աղբահավաք ծառայության կողմից համայնքային աղբավայր: Ներդրվելու է թափոնների կառավարման համակարգ:

4.5 Սոցիալ-տնտեսական

Զբոսաշրջությունը նպաստում է տնտեսության զարգացմանը՝ ստեղծելով աշխատատեղեր և հնարավորություններ ինչպես քաղաքներում, այնպես էլ քաղաքային միջավայրից դուրս, կանխելով գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքը և աշխատուժի արտագաղթը, ընդգրկելով հարակից բոլոր ոլորտները: Այս առումով, Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արձանը զգալի ազդակ կհաղորդի զբոսաշրջության զարգացմանը: Նկատի ունենալով, որ մոնումենտալ արձանը լինելու է Քրիստոսին նվիրված աշխարհի ամենաբարձր արձանը, ինչպես նաև ուսումնասիրելով միջազգային զբոսաշրջության ցուցանիշները և ուղղությունները, հաշվի առնելով, որ համաշխարհային զբոսաշրջության կազմակերպման մեջ կարևորվում է էկոզբոսաշրջությունը, այսօր արդեն կարող ենք փաստել, որ մոնումենտալ արձանը

շոշափելիորեն կնպաստի Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվաքանակի ավելացմանը, ինչն էլ լրացուցիչ մուտքեր կապահովի նաև պետական բյուջե:

Այս ծրագրի իրականացումը, որպես զբոսաշրջային նոր ուղղություն՝ ՀՀ կներգրավի զբոսաշրջային հոսքեր:

Զբոսաշրջային հոսքերի կառավարման մեխանիզմների առումով, կձևավորվի նոր զբոսաշրջային երթուղի, ինչը կխթանի ազդակիր բնակավայրերում ենթակառուցվածքների և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, կնպաստի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը:

Զբոսաշրջիկների տեղաբաշխումը տվյալ տարածքում կիրականացվի նախապես ձևավորված հատուկ ժամանակացույցերով՝ նվազեցնելով զբոսաշրջիկների հնարավոր կուտակումները:

Շահագործման փուլում զբոսաշրջիկները կիրազեկվեն տարածքում առկա բնության հուշարձանների, դրանց պահպանման ռեժիմի առանձնահատկությունների մասին: Հուշարձանների տարածքում կսահմանվեն վարքագծի որոշակի կանոններ՝ կարևորելով բնության հուշարձանների պահպանությունը: Իրազեկումը կկատարվի ցուցատախտակներով, տարբեր գովազդային պաստառներով և էլեկտրոնային հարթակի միջոցով՝ լիազոր մարմինների կողմից սահմանված չափանիշների հիման վրա:

Մոնումենտալ արձանը տարածաշրջանը կարող է դարձնել էլ ավելի ճանաչելի՝ հնարավորություն տալով ի հայտ բերել նաև դեռևս չբացահայտված զբոսաշրջային ուղղություններ:

Աշխատատեղերի ստեղծում

Համալիրի գործունեությունն ապահովելու և սպասարկելու նպատակով սկզբնական շրջանում նախատեսվում է ստեղծել մոտ 150-160 նոր աշխատատեղ, որը հետագայում՝ շահագործման ընթացքում աստիճանաբար կհասնի շուրջ 500-ի: Սրճարանում աշխատելու համար կներգրավվի մոտ 25-30 աշխատակից (մատուցողներ, բարմեններ, խոհարարներ, օգնականներ, մաքրուհիներ, պահեստի աշխատակիցներ, մենեջեր, մատակարարման պատասխանատու և այլն), թանգարանում աշխատելու համար կներգրավվի մոտ 20-22 աշխատակից (էքսկուրսավարներ, տոմսարկղի և հաճախորդների սպասարկման, անվտանգության, մաքրության ապահովման և տեխնիկական անձնակազմ), կանաչապատ տարածքների խնամքի համար՝ մոտ 20-22 աշխատակից, որոնք աշխատելու են հերթափոխով (այգեպաններ և խնամքի մասնագետներ, ոռոգման և տեխնիկական սպասարկման անձնակազմ), ճոպանուղու սպասարկման համար՝ մոտ 22-24 աշխատակից, որոնք ևս կաշխատեն հերթափոխով (օպերատորներ, տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ, վարորդներ և այլն), մարքեթինգի, կառավարման անձնակազմ և ադմինիստրացիա՝ մոտ 15-20 (մարքեթինգ, գովազդ, սոցիալական մեդիա, վարչական անձնակազմ՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսներ,

մատակարարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ համակարգերի կառավարում, տոմսային համակարգ), այլ սպասարկման ոլորտում՝ մոտ 30-32 (տեխնիկական անձնակազմ, ամբողջ տարածքի մաքրությունն ապահովող անձնակազմ): Տարածքում կգործի նաև շուրջօրյա անվտանգության համակարգ՝ 3 հերթափոխով և բժշկական ծառայություններ մատուցող անձնակազմ: Շինարարության փուլում կբացվի մոտ 70 աշխատատեղ:

Աշխատողների միջին ամսական աշխատավարձը շինարարության և շահագործման փուլերում կկազմի 120-200 հազար ՀՀ դրամ: Մարքեթինգի, կառավարման անձնակազմի և ադմինիստրացիայի աշխատակիցների աշխատավարձը կկազմի մոտ 350000 ՀՀ դրամ: Աշխատավարձի չափերը կհստակեցվեն հաստիքացուցակը կազմելիս:

Աշխատողները հիմնականում ընտրվելու են համալիրի հարակից բնակավայրերից, իսկ նեղ մասնագիտությամբ անձանց բացակայության դեպքում՝ այլ բնակավայրերից:

Սոցիալ-տնտեսական վիճակ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքային բյուջեի մուտքերը կավելանան, ինչը դրական ազդակ կհանդիսանա ներհամայնքային կյանքի, ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման, համայնքում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության առաջխաղացման, ինչպես նաև նոր ստեղծվելիք բիզնեսների համար: Համայնքում զբոսաշրջային հոսքերի ավելացման շնորհիվ կզարգանա տնտեսությունը և կլուծվի հարակից բնակավայրերի մարդկանց զբաղվածության խնդիրը: Նշված փոփոխությունները դրական ազդեցություն կունենան հատկապես ազդակիր համայնքների բնակչության սոցիալական վիճակի վրա:

Կզարգանա տեղական մթերքների առևտուրը, տարածքի բնակիչները կարող են առաջարկել բազմաթիվ ծառայություններ՝ տեղական կաթնամթերքի, խմորեղենների, ինչպես նաև տաքսի ծառայությունների և այլնի ձևով:

Նախատեսվող գործունեությունը դեռ գտնվում է նախագծային փուլում, բայց արդեն իսկ համայնքներում դրական ազդեցությունն ակնհայտ է կապված անշարժ գույքի և հողամասերի արժեքների կտրուկ բարձրացման հետ: Արդեն տեսանելի է նաև ազդակիր և հարակից բնակավայրերում հյուրանոցային, ռեստորանային և հանրային սննդի օբյեկտների զարգացման հեռանկարը:

Հիսուս Քրիստոսի 33 մետրանոց մոնումենտալ արձանի պատրաստման համար կնքվել են պայմանագրեր, մյուս թույլտվությունների ստացումը գտնվում է ընթացիկ փուլում:

Մշտադիտարկումների իրականացման պլան (շինարարության փուլ)

Մոնումենտալ արձան-համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ և ըստ անհրաժեշտության,

2. փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ,

5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ՝ համապատասխան մասնագետի ներգրավմամբ,

6. շինարարության փուլում շարունակաբար վերահսկվելու են շրջակա միջավայրի փոփոխությունները՝ հողի, ջրի որակի, բուսականության և հնարավոր սողանքների առումով:

Շինարարության փուլում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 2780000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	200000	200000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x45000	1620000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Հողերի մշտադիտարկում	12x25000	300000
Կենսաբազմազանության մշտադիտարկում	12x30000	360000

Ամբողջ շինարարության համար		2780000
----------------------------	--	---------

Մշտադիտարկումների իրականացման պլան (շահագործման փուլ)

Շահագործման փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

1. տարածքում տեղադրել մթնոլորտային օդի մոնիտորինգի սարքավորումներ, իրականացնել մթնոլորտային օդի մշտադիտարկում ամենօրյա ռեժիմով և արդյունքները հասանելի դարձնել այցելուներին,

2. իրականացնել կենսաբանական մաքրման կայանից դուրս եկող ջրի լաբորատոր հետազոտություններ համապատասխան մասնագիտական կառույցի ներգրավմամբ՝ տարեկան մեկ անգամ,

3. կանխարգելիչ նպատակով տարեկան մեկ անգամ իրականացնել հողի որակի մոնիտորինգ՝ նաև հնարավոր սողանքային երևույթների կանխման նպատակով,

4. էկոլոգիական միջոցառումների կազմակերպման միջոցով այցելուներին տեղեկացնել բնության հուշարձանների և դրանց պահպանության կարևորության մասին,

5. իրականացնել աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

6. իրականացնել կենսաբազմազանության մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ, այդ նպատակով ներգրավել համապատասխան մասնագետների՝ հատկապես կարմիրգրքյան բույսերի և կենդանիների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրանց պահպանությունը պատշաճ իրականացնելու նպատակով:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p> <p>Շահագործման փուլ Տարածքում կտեղադրվեն հատուկ նշաններ և ցուցանակներ՝ կապված տարածքում առկա բնության հուշարձանների հետ: Շահագործման փուլում գործընթացը կհամաձայնեցվի լիազոր մարմնի հետ</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հավաքման և հետագա հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p> <p>Շահագործման փուլ Արտանետումներ չեն կանխատեսվում, արտանետումների աղբյուրներ չկան</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p> <p>Շահագործման փուլ Աղմուկը հիմնականում կապված է ճուպանուղու աշխատանքի հետ, որը եվրոպական արտադրության է և ըստ տեխնիկական անձնագրի՝ աղմուկի մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում</p>

	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>Շահագործման փուլ Պետք է ներդրվի թափոնների կառավարման համակարգ, թափոնների քանակի վերահսկողություն, տեսակավորման աղբամանների տեղադրում, աղբի տեղափոխում ամենօրյա ռեժիմով՝ պայմանագրային հիմունքներով</p>
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուր ապահովելու նպատակով համապատասխան փաստաթղթերի փաթեթը կներկայացվի լիազոր մարմին ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p> <p>(c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:</p> <p>Շահագործման փուլ Կենսաբանական մաքրման կայանների միջոցով կեղտաջրերի մաքրում մինչև ոռոգման ջրի ցուցանիշներ, ինչպես նաև ջրերի որակի վերահսկողություն տարեկան մեկ անգամ, Տարածքում բնական ջրային հոսքերի վրա որևէ ազդեցության բացառում</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: <p>Շահագործման փուլ Այցելուների հոսքերի կառավարում, երթևեկության կանոնակարգում՝</p>

		<p>համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների և պետական մարմինների հետ (ոստիկանություն, համայնք)</p>
<p>Արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար: <p>Շահագործման փուլ</p> <p>Արտակարգ իրավիճակների և պատահարների դեպքում համապատասխան միջոցառումների իրականացում, ճոպանուղու անվտանգության ապահովում պարբերական ստուգումների միջոցով</p>
<p>Կենսաբազմազանություն</p>	<p>Ծառաֆային բուսականության վրա ազդեցություն</p>	<ul style="list-style-type: none"> - Բուսականության պահպանում և կառավարում - Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակ հայտնաբերելիս նախատեսել համապատասխան միջոցառումներ <p>Շահագործման փուլ</p> <ul style="list-style-type: none"> - Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար: - Հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիս մեկ հաճախականությամբ: - Կանաչապատումն իրականացնել կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման

		<p>պահանջներին համապատասխան:</p> <ul style="list-style-type: none"> - բուսական աշխարհի օբյեկտների պահպանությունն իրականացնել Կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման հավելվածի պահանջներին համապատասխան
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ <p>Շահագործման փուլ</p> <ul style="list-style-type: none"> - Պահպանել և վերականգնել Գաճաճ արծիվ կարմիրգրքյան տեսակի բնադրավայրերը: - Նվազեցնել էլեկտրական հոսանքի ազդեցությունը՝ տեղադրելով մեկուսիչներ; - Անվտանգության աշխատակիցները կխստացնեն վերահսկողությունը արծիվների անօրինական որսի և բները ոչնչացնելու դեմ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ	<ul style="list-style-type: none"> -Կազմակերպել էկոլոգիական միջոցառումներ, որոնց միջոցով այցելուները կտեղեկանան բնության հուշարձանների, կարմիրգրքյան տեսակների և դրանց պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների մասին: - տեղադրել ցուցանակներ, որոնց միջոցով այցելուները կտեղեկացվեն բնության հուշարձանների և դրանց պահպանության նպատակով վարքագծի որոշակի կանոնների մասին
Շահագործման փուլ	Օդի որակ	-Իրականացնել օդի որակի վերահսկում մշտադիտարկումների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ

	Աղմուկ	-Իրականացնել աղմուկի մշտադիտարկում:
	Թափոնների կառավարում	-Համալիրի տարածքում և ճոպանուղու կայանների մոտակայքում տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ - տարածքում բացառվելու է աղբի կուտակումը, այն ամենօրյա ռեժիմով պայմանագրային հիմունքներով կհեռացվի աղբահավաք ծառայության կողմից համայնքային աղբավայր:
	Կայուն տուրիզմի խթանում	Այցելուների թվի վերահսկում, որպեսզի բնական ռեսուրսների վրա չլինի մեծ ազդեցություն Տուրիստական հոսքերի կառավարում, ժամանակացույցերի կազմում և այլն

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես	Ժամանակամիջոց	Կատարող
----------------------	--------------------------------	--------------------------	---------------	----------------------	----------------

			իրականացնել		
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Կենսաբազմազանություն	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության	Գործունեության ենթակա տարածք	Արտաքին զննում, դաշտային հետազոտություններ	Շինարարության փուլում	Կապալառու

	մշտադիտարկում Կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությանն ուղղված մշտադիտարկում:		եր		
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
4. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
5. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
6. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
7. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
8. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
9. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
10. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ